

Վայոց ձորի մարզպետարանում քննարկվել են Համահայկական ամառային 6-րդ խաղերին մարզի մասնակցության հետ կապված հարցեր, 07.05.2015



Երեկ՝ մայիսի 6-ին, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանում տեղի ունեցավ հանդիպում Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտեի նախագահ Իշխան Զաքարյանի հետ: Վայոց ձորի մարզի կողմից մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանը, Ջերմուկ և Վայք քաղաքների ղեկավարները, Եղեգնաձոր քաղաքի ղեկավարի տեղակալը, մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի գծով պատասխանատու գլխավոր մասնագետը: Հյուրերի կազմում էին „Համահայկական խաղերի համաշխարհային կոմիտե., ՀԿ-ի և աշխատանքային խմբի անդամները:

Հանդիպմանը քննարկվել են Համահայկական ամառային 6-րդ խաղերին մարզի մասնակցության հետ կապված հարցեր, ճշտվել է Համահայկական խաղերի ջահը Սյունիքի մարզից ընդունելու և Արարատի մարզին փոխանցելու ճանապարհային քարտեզը: Նշենք, որ 2015թ. Համահայկական ամառային 6-րդ խաղերն ընդգրկվել են Հայոց Մեծ եղեռնի 100-ամյակին նվիրված պետական միջոցառումների ծրագրում: